

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՄԱՅԻՍ 10

ԹԻԻ 3821

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 10 ՄԱՅԻ :

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵԿԵՂԵՅԻ ԵՒ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԻԻ-ԵՆՐՔ, 14 Ապրիլ 1886

Ընթերցողք անտարակոյս պիտի զարմա-
նան երբ լսեն թէ Միացեալ Նահանգաց
մէջ իսկ, ուր լրագրաց ազդեցութիւնն ա-
ւելի մեծ է քան ուրիշ ուր եւ իցէ քաղաքա-
կիրթ երկրի մէջ, կան մարդիկ, ոչ հասա-
րակ մարդիկ միայն, այլ եկեղեցիներու ե-
րիցունք եւ բարեպաշտութեամբ համբաւ-
եալ մարդիկ, որ հանապազօրեայ լրագրաց
օգուտն ուրանալու չափ յառաջ կ'երթան,
եւ կ'ողբան թէ օրաթերթերէն շատերուն
ընթերցումն աղետաբեր եղած է ժողովրդ-
եան : Այսպէս խորհողները բարեբաղդա-
բար են կրօնականաց ամենէն մոլեռանդ-
ներն որոց քարոզներն եւ երեմիական ող-
բերն կարգ մ'անձանց միայն լսելի են եւ
չստ սակաւաթիւ անձանց վրայ ազդեցու-
թիւն կ'ընեն : Սակայն կիրակնօրեայ թեր-
թերու դէմ կրօնականաց հակառակութիւնը
գրեթէ ընդհանուր է, եւ Նիւ Նորքի մէջ
իսկ ի բաց առեալ քանի մը աղատամիտ ե-
րէցներ, որոց ուղղափառութեան վրայ կը
կասկածին բողոքականաց պահպանողականք,
այլ եւ այլ յարանուանութեանց ներկայա-
ցուցիչը կարծիք յայտնած են թէ քաղաքա-
կան լրագրաց կիրակի օրեր հրատարակուիլը
չարիք է, եւ թէ բարեպաշտ քրիստոնէայը
աշխատելու են այս չարիքը խափանելու :

Նշանաւոր երէց մը յատուկ շրջաբերական
մը ղրկելով իւր եկեղեցւոյ անդամներուն
խնդրած է անոնցմէ չ'ընթեռնուլ կիրակի-
նօրեայ լրագիր, եւ գործով ու օրինակաւ
չը քաջալերել կիրակնօրեայ հրատարակու-
թիւնն լրագրաց օր պատճառ կ'ըլլան Աստու-
ծոյ տուններուն (եկեղեցեաց) ժողովուրդի
թափուր մնալուն : Այս խնդիրը կը թուի
դեռ վերջացած չէ : Լրագրապետք երէց-
ներուն կարծիքը հրատարակած են ցուցու-
նելու համար իրենց ընթերցողաց թէ մինչ
աշխարհ կը շարժի, ո՞ր կողմ կ'ընթանան
Բողոքական եկեղեցեաց երէցներէն շատեր :
Ոմանք նենգութեամբ ըսած ալ են թէ ե-
րէցները կը վախնան ժողովրդեան լուսա-
ւորութենէն եւ աշխարհի արագ յառաջա-
դիմութենէն, եւ կ'ողբեն, եթէ կարենան,
քանի մը դար ետ դառնալ :

Մինչ երէցները կը ջանան կիրակնօրեայ
լրագիրները դադրեցունել, աղատամիտ ե-
րեւոյթիւններ նոր օրէնքներ կը հաստատեն
կիրակիի պահպանութեան վերաբերեալ
խիստ օրէնքները մեղմացնելու, եւ կիրակի
օրեր ժողովրդեան առջեւ բանալու ազգա-
յին թանգարաններու դուռները : Որչափ
կարելի է դատել ժամանակաց նշաններէն,
մոլեռանդ կրօնականաց բոլոր ճիւղերն այս
մասին ասպարղիւն պիտի ըլլան, եւ կիրակի-
նօրեայ լրագիրք ժողովրդեան էական պէտ-
քերու կարգն անցած են եւ ոլիտի մնան
այնպէս : Հասարակաց միտումը կիրակիի
պահպանութեան մասին է ոչ ի յետադի-
մութիւն դէպ ի խիստ Մաքրականութիւն,
այլ ի յառաջադիմութիւն դէպ աղատական
քրիստոնէութիւն ոյր նշանաբանն է «Շա-
բաթ վասն մարդոյ, եւ ոչ մարդ վասն շա-
բաթու» : Տոգդի Կալմէճ որ ծայրայեղ աղա-

տական եւ անշարժ պահպանողական երիցանց մէջտեղ կը կենայ, անցեալ կիրակի քարոզ մը տուաւ լրագրաց վրայ ի ներկայութեան աւելի քան երեք հազար ունկընդորաց, եւ ցուցող թէ որչափ մեծ է լրագրաց ազդեցութիւնն ի բարին: Եւ այսպէս անուղղակի դատաստարտեց յետադիմական երիցանց քաջելն ընդդէմ խթանի: Տոգդ. Դաւիթ Քարոզին բնաբան ընտրած էր Զաք. Ե. 1 համարը. « Եւ դարձայ եւ աչքս վերցունելով տեսայ, եւ ահա թռչող տոմս մը »: « Բնաբանիս մէջ յիշուած թռչող տոմսն », ըսաւ պերճախօս քարոզիչն, « ունէր իւր վրայ գրուած մարգարէութիւն մը: Սերկեանս թռչող տոմսն է լրագիրը: Կարող չէք այլ եւս անդիտանալ այս զօրութիւնն երբ ի համարի կ'առնուր զօրութիւններն որ հզօր ազդեցութիւն ունին ընկերութեան վրայ, ինչպէս կարող չէք անդիտանալ զմիջօրէն եւ զԱդրանդեան Ուկիւանոս: Բուն ժամանակն է որ քարոզ մը խօսիմ ձեզ գնահատելու ինչ որ լրագրական մամուլը կատարած է եւ կը կատարէ: Ոչ մի մարդ, կենդանի կամ մեռեալ, այնչափ շնորհապարտ գտնուած է լրագրաց որպէս ես, վասն զի լրագիրը տուած են ինձ մըշտատեւ ունկնդիրներ քրիստոնեայ աշխարհի ամէն քաղաքի, ամէն աւանի եւ ամէն գիւղի մէջ, եւ ես առաջի Աստուծոյ հրապարակաւ կը յայտնեմ շնորհակալութիւն լրագրատետաց, հրատարակողաց եւ գրաշարաց, եւ անկեղծութեամբ կը յայտարարեմ թէ որչափ կարող եմ, պիտի ջանամ ընդարձակել իրենց ասպարէզը: »

« Լրագիրն է դարուս մեծագոյն կրթիչը: Լրագիրն է մատեան, բեմ եւ ատեան միանգամայն: Չը կայ ուշադրութեան արժանի նիւթ մը, — կրօնական, գիտական, առեւտրական, երկրագործական, արուեստական եւ մեքենական —, որ լրագրի պարզեցումէն զուրկ ըլլայ: Բոլոր մեր եկեղեցիներն, դպրոցներն, արուեստից թանգարաններն, որբանոցներն եւ անկեղանոցներն, կրօնական կամ աշխարհական բարեկարգութեան բոլոր ձեռնարկութիւններ կը զգան լրագրական մամուլ ոգեւորիչ ազդեցութիւնն: Առաջին լրագիրն սկսաւ հրատարակուիլ յիսուայ երբ Վենետիկ պատեւրազմի մէջ էր: Թերթ մը հրատարակուե-

ցաւ Վենետիկցւոց զինուորական եւ առեւտրական տեղեկութիւն տալու նպատակաւ: Լրագիր սկսաւ հրատարակուիլ յԱնգլիա 1589 ին: Առաջին անգլիարէն լրագրին աւանունն էր Մէրքուրի (Շէրմէս): Գաղղիոյ մէջ լրագիր հրատարակուեցաւ առաջին անգամ 1631 ին խմբագրութեամբ Բոչլի մը յառողջութիւն եւ ի զբօսանս իւր հիւանդաց: Լրագիրն զօրութեամբ եւ ազդեցութեամբ այնչափ յառաջադիմեց որ Նաբոլէօն իւր ձեռքը յօդուածներ կը գրէր լրագրաց համար, եւ 1829 ին Բաբիգ քաղաքին մէջ կը հրատարակուէին 196 լրագիրք: Սակայն լրագրութիւնն ամենէն մեծ յառաջադիմութիւնն ըրած է այս երկրին մէջ: 1755 ին բոլոր այս երկրին մէջ կը հրատարակուէին երեսուն եւ վեց լրագիրք միայն: Այժմ 13 հազար լրագիրք միլիոնաւոր, երկիւրոնաւոր թերթեր կը սփռեն երկրին չորս կողմը: Աշխարհի յառաջադիմութեան նպատակով միջոցներն հաշուելու մասին դժուարութիւն չունիմ: Չորս դար առաջ Գերմանիոյ մէջ փաստաբանը դատարանին մէջ բռնցի կը կռուէին իրարու հետ որոշելու թէ նախ որո՞ւ դատը տեսնուելու էր, եւ դատաւորը կուտար իւր վճիռն ի նպաստ այնմ, որ զօրեղագոյն բռնն եւ կռուի եւ կորովագոյն բազուկ ունէր, եւ եթէ դատաւորին վճռոյն վրայ վէճ ծագէր, դատաւորն ալ բռնցի կռուելու էր դատ վարողներու հետ: Այն ժամանակի իշխաններէն եւ հարստագոյն մարդերէն շատերը չը գիտէին կարգաւ իրենց կալուածոց թուղթերը: Ինչէ՞ն յառաջ եկաւ փոփոխութիւնը զոր կը տեսնենք այժմ: Կ'ըսէք թէ գիրքերն յառաջ բերին այս փոփոխութիւնը: Ո՛չ, բարեկամք, մարդիկ ընդհանրապէս շատ գիրք չեն կարդար: Այս երկրին մէջ, կամ ուրիշ ո՞ր եւ իցէ երկրի մէջ առէք մեծ բազմութիւն մարդոց, եւ հարցուցէք թէ անոնցմէ քանի՞ք ընթերցած են քանի՞ ճառեր եւ խորհրդածութիւններ սահմանադրական օրինաց վրայ, քանի՞ գիրքեր գիտութեանց վրայ, քանի՞ գիրքեր նաւարկութեան, երկրաբանութեան եւ թուաբանութեան վրայ: Առհասարակ մարդիկ ո՞րչափ կարգացած են Պոլէ, Քսենոփոնէ, Հերոդոտոսէ, Բերսիպպէ: Փոփոխութիւն ի՞նչպէս յառաջ եկաւ: Միացեալ Նահանգաց մէջ՝ միջին հաշուով տարին իւ-

րաքանչիւր անձ մէկ գիրք չը կարդար : Ապա ի՞նչպէս եղած է որ մարդիկ այժմ կարող են երեւիլ գիտութեան եւ արուեստից վերաբերեալ ամէն խնդիրներու վրայ, եւ հմտութիւնն ընդհանուր է լուսոյ պէս : Այս փոփոխութեան ի՞նչ պատճառ տալու է : Յետ սուրբ գրոց՝ լրագիրն, սրածեւ եւ ու մէնուրեք լրագիրն, որ ցանկերու վրայէն կը թուի կ'երթայ, դուռներու կ'սաբաց փեղկերէն ներս կը նետուի : Ամէնքը կը կարդան զայն, գերմանացի, գաղղիացի, իտալացի, անգլիացի, զուիցերիացի, ամէնքն ալ հիւանդ կ'ըլլան երբ լրագիր չը կարդան : Նրկուշարթի առաւօտ, շաբաթ գիշեր, նա խաճաչէ առաջ, ընթրիքէ ետք, կիրակի եւ լուր օր լրագիր կը կարդան : Բաց համարձակ կ'ըսեմ թէ լրագրական մամուլը պիտի ըլլայ հզօրագոյն գործի որով Աւետարան պիտի քարոզուի, ոճիրն արմատէն պիտի խլուի, հարստահարութիւն պիտի գահընկէց ըլլայ, Աստուած պիտի փառաւորուի : Երբ լրագրի թերթեր տպուելով մէկ կողմէն միւս կողմ կը թռչին, մամուլ շունդեան հետ կը լսեմ Ամենակալ Աստուծոյ ձայնն առ միաբան ազգս եւ ազիւնս երկրի . « Դա՛ղարէ, արի ե՛կ արտաքս » . եւ առ հրեշտակս խաւարի հրամանն . « Նշիցի լոյս » : Քանի՞ք ի լրագրաց քաղաքիս եւ աւանաց վերջին տասն տարիներու մէջ հրատարակած են հզօր յօդուածներ ի նպաստ քրիստոնէական կրօնի, եւ տուած են ամենէն ազդու մեկնութիւններն աստուածային նախախնամութեան ի մէջ ազգաց :

Նրկու տեսակ լրագիրք միայն կան : Աղէկ լրագիրք, — շատ աղէկ, գէշ լրագիրք, — շատ գէշ : Երբ լրագիր մը կ'սկսի հրատարակուիլ, կրնայ ժամանակ մը չունենալ մասնաւոր համբաւ ո՛չ վասն առաքինութեան եւ ո՛չ վասն ամբարշտութեան : Բայց քիչ ատենէն ետքը մարդիկ կ'որոշեն, եւ կ'ըսեն լրագրի մը համար « Աղէկ է », եւ իրօք լրագիրն աղէկ է . « Գէշ է », եւ իրօք լրագիրը գէշ է : Մէկ լրագիրն է մարմնացումն լուրերու, գաշնակից առաքինութեան եւ թշնամի ոճրի, է հզօրագոյն գործի վերակելու զաշխարհ : Միւս լրագիրն է աւազակ ի մէջ բարոյական զօրութեանց, արատիչ համբաւոյ, թշնամի ամենայնի որ է բարի, երկրի վրայ զօրագոյն գործի կռուելու ընդ-

դէմ : Աստուծոյ : Մին է մեր լուսոյ հրեշտակը, միւսը՝ խաւարի դեւն, եւ այդ հրեշտակապետին ու դեւին մէջ տեղ պիտի մղուի պատերազմն որ պիտի որոշէ մարդկային ազգի ճակատագիրը : »

Պերճախօս քարոզիչն այսպէս լրագրաց յարգը ճանչնալէ, եւ աղէկ ու գէշ լրագրաց տարբերութիւնը ցուցունէն ետքը, աղու կերպով կը նկարագրէ թէ ի սկզբունէ անտի գրագէտք ո՛րչափ քիչ վարձատրուած են իրենց աշխատութեանց համար : Օղիվըր Կոլտսմիթ, կ'ըսէ, երբ իւր բարեկամները կը հրաւիրէր իւր տունը, կը նստէր պատուհանին մէջ, վասն զի ամթոմը միայն կար տան մէջ : Տը Ֆօ, հեղինակ 218 հատորներու, կը մեռնի առանց դրամի : Գիտնականն Ջօնսըն այնպիսի ցնցոտիներ զգեցած էր, որ չէր կրնար պատուաւոր անձանց հետ մէկ տեղ ճաշի նստիլ : Յորդոր կը կարդայ աւելի վարձատրելու խմբագիրներն եւ գրագէտները :

ԵԱՆՔԻՆ

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Կ Ա Լ Ի Լ Է

Կ Ա Մ

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՄԱՐՏԻՈՍ ՄԸ

Եթէ ճշգրիտ զննութիւնք հաստատած եին թէ երկերս է որ կը դառնայ, այն ատեն ո՛չ միայն չընդունվի միջոցն, որ կը փորձէր անշարժութեան դատապարտել զայն, այլ մինչեւ եթէ լուր մարդիկ միանան չեն կրնար արգիլել զայն դառնալէ եւ զիրենք ալ անոր հետ միասին դառնալէ :

ԲԱՍՔԱԼ

Աստեղագիտութիւնն ամեն գիտութեանց երիցագոյնն է . նա քաղաքակրթութեան հետ մէկտեղ ծնած է :

Ի սկզբան աշխարհիս դրութեան նկատմամբ մարդոց ունեցած գաղափարն կը նը-

մանէր ճշդիւ այն գաղափարին, զոր կ'ու-
նենայ տգէտ մը երկնակամարը դիտելով:

ԺՁ. դարէն առաջ անհունութեան եւ
տիեզերական կազմակերպութեան վրայ ոչ
ինչ ծանօթութիւն չը կար. կը կարծուէր
թէ երկիրս տիեզերաց կեդրոնն է, որոյ
չուրջը կը դառնան արեգակը, լուսինն եւ
աստեղը՝ իբր հաստատուն կամարէ մը կախ-
ուած լուսատու ջահեր:

Տիեզերաց գաղտնեաց խորը թափանցել
կարենալու համար անհրաժեշտ էր որ ուղ-
ղուէր նախ այդ մեծ սխալն, մեր աչաց ե-
րեւցածին բոլորովին հակառակ կերպով.
այն է երկրագնդի օրական թաւալումն եւ
արեգական բոլորտիցը կատարած տարեկան
շրջանն:

Այդ մեծ գիւտը Կոպեռնիկի փառքն է:

Կոպեռնիկ, որ ծնած է Բրուսիոյ Թորն
քաղաքին մէջ 1573 ին, Հռովմի մէջ չափա-
գիտութիւն ուսանելէ եւ ժամանակակից
երեւելի աստեղագիտաց մանաւանդ Գեր-
մանացի աստեղագէտ Բէթիոմոնթանուսի
հետ բազմիցս խորհրդակցելէ յետոյ, ձեռ-
նարկած էր նախնի աստեղագիտաց բոլոր
դրութիւնները նոր քննութեան մ'ենթադ-
րել, յորմէ եզրակացուցած էր թէ երկնա-
յին բոլոր մոլորակներ արեգակն շուրջը կը
դառնային, եւ թէ երկիրս կրկին շարժում
ունէր, մին՝ իւր առանցքին վրայ օրը մի
անգամ թաւալելով, եւ միւսն՝ արեգակն
բոլորտիցը տարին մի անգամ շրջան մ'ը-
նելով:

Ճշմարտութիւնն յարգելու համար պար-
տաւոր ենք յիշել անցողակի թէ այդ գաղա-
փարն բոլորովին նոր չէր, նախնի աստե-
ղագիտաց ունեց մանաւանդ Պիլթագորեսն
խմաստասէր Ֆիլոլաուսի (*) գործոցը մէջ այդ
ճշմարտութեան ծիլը կը նշմարուէր:

Պատմութիւնը կը ցուցնէ թէ մարդիկ
դիւրաւ չեն ընդունիր այնպիսի ճշմարտու-
թիւններն, որք բոլորովին նոր երեւոյթով
կը ներկայանան իրենց, եւ այնքան վստա-
հութեամբ կը մերժեն, որքան հեռու գըտ-
նեն զայնս զգայարանաց ներքեւ իյնալէ:

(*) Ֆիլոլաուս՝ ըստ ունեց Գրութոնցի (Յունաս-
տան) եւ ըստ այլոց Տարենտոնցի (Իտալիա)՝ ծնած
է շուրջ 500 տարի առաջ նախ քան զՔրիստոս եւ
մեռած 420 ին (Ն. Ք.):

Դժուար չէ հասկնալ թէ այս մեծ գիւտն
ալ չէր կրնար՝ դիւրաւ եւ առանց ընդդի-
մութիւն գտնելու՝ ուղղել այն մեծ սխալն,
որ դարերէ ի վեր արմատացեալ էր:

Ներկիւ շարժականութեան վարդապե-
տութիւնն, որ արդի աստեղագիտութեան
հիմնն է, այսօր այլ եւս ո՛ր և է վիճաբանու-
թեան ներքեւ չը կրնար իյնալ:

Այդ ճշմարտութիւնն ալ վերջապէս յաղ-
թանակ կանգնած է, բայց ո՛չ նուազ ար-
տասնօր:

Սակայն Կոպեռնիկ զերծ մնաց այդ ար-
տասնօրէ. նա պարկեշտ էր, առանձնակեաց
եւ մենասէր. խաղաղութեամբ անցուց իւր
կենաց օրերն պարապելով աստեղագիտու-
թեան եւ ձրի դասախօսութեան:

Ճշմարտին տեսութիւնն (theorie) եւ
բարւոյն գործադրութիւնն (pratique) բա-
ւական էին նորա հոգւոյն տենչը գոհացը-
նելու. քաջասիրտ չէր, կրնանք ըսել թէ
բիշ մը երկչոտ էր. ունտի կանխահաս ճը-
մարտութիւն մը հրապարակելէ՝ կը վախ-
նար, թէ և բոլորովին չէր պահեր զայն ընդ-
գրուանաւ. կ'ուսուցանէր զգուշութեամբ,
բայց ի վերայ տանեաց չէր քարոզէր:

Կը խորհէր թէ այդպիսի գիտական դա-
ւանութիւն մը, որ սխալ սարսէր նա ասացի
ոքոյնս թիքական չէնք, կրնար զինքն ի
մարտիրոսութիւն առաջնորդել. եկեղեցին
յուզել և երկպառակել սոսկալի հետեւանք-
ներ պիտի ունենային, ուստի՝ փութորկի մը
տեղի չը տալու համար ստիպուած էր լռել:
Կոպեռնիկ Յեղափոխութեան Երկնային Փայծոց
մակագրով հոյակապ գործ մը պատրաստած,
բայց 27 տարի քովը պահած էր ձեռագիրն
առանց տպագրել համարձակելու: Իւր կե-
նաց վերջին օրերուն մէջ՝ իւր բարեկամաց
Թախանձանքէն ստիպեալ, որոց մէջ կը գըտ-
նուէին բազմաթիւ եպիսկոպոսոնք, տալա-
գրութեան յանձնեց զայն: Առաջին թեր-
թերու նախափորձը բերին Կոպեռնիկի այն
պահուն, յորում նա արդէն իւր վերջին
շունչը կը փչէր (25 մայիս 1543): Կըսեն
թէ մեծանուն աստեղագէտն քանի մը վայր-
կեան իւր դողդոջուն ձեռաց մէջ բռնեց
տպագրեալ թերթերն աչերն յերկինս յա-
ռելով: Այդպէս ազատ մնաց նա հալա-
ծումէ:

Բայց ո՞վ պիտի յանդգնէր աներկիւղ քա-

րողել այն ճշմարտութիւնն, որ ժամանակակից էր արարչագործութեան :

— Մեծն ԿԱԼԻԼԵ, այն անվեհեր իտալացին, որ յանդիմանեցաւ քարոզելու, մաքառեցաւ, մարտնչեցաւ եւ չարչարեցաւ. նա՛ վեր առաւ այն համայնապարփակ ըողն, որ կը ծածկէր զանհունութիւն. նա՛ պարզեց մարդկային աչաց առջեւ երկնային աշխարհաց չքեղ տեսարանն. նա՛ տեղէն խախտեց եւ շարժեց երկրագունդս, զոր տգիտութիւնն մինչև այն ատեն անշարժութեան դատապարտած էր :

Կալիլէ անհունութեան փրկատափոր Գոլումպոնն է :

Կալիլէոս-Կալիլէ ծնած է 1564 Վիետրուարի 18ին իտալիոյ Թոսքանայի արշիդէքսութեան Բիզա քաղաքին մէջ, ազնուական բայց աղքատ ընտանիքէ մը :

Մինչև ցարդ կը մնայ, կ'ըսեն, դեռ այն տուն, ուր ծնած էր. տիեզերահաշակ աստեղագէտն. « Անշուք տեսքով կրկնայորկ տուն մ'է, որ ընդարձակ պարտէզի մը վրայ կը նայի, եւ ուր կ'առաջնորդէ Առնօ գետի քարափէն եկող վրան գոց նրբուղի մը : Տան երկրորդ յարկը՝ կը բաղկանայ ընդարձակ սրահէ մը եւ երկու երեք խուցերէ, որոց միոյն մէջ ծնած է Կալիլէ » :

Կալիլէի հայրը, Վիչենցիոս Կալիլէ, հարուստ չէր, սակայն ուսեալ էր եւ լաւ երաժշտութիւն գիտէր. կը բնակէր Ֆիօրէնցայի մէջ. ունէր վեց զաւակ, երեքը մանչ եւ երեքն աղջիկ. ապագայ աստեղագէտն անդրանիկն էր իւր զաւակացի :

Կալիլէ մատաղ հասակէն սկսեալ բեղմնաւոր հանձարի մը նշանները կը փայլեցնէր իւր վրայ. այն տարիքին մէջ իսկ, յորում մարդս սնոտի խաղերով կ'զբօսնու, մեր պատանին մեքենայներ կը հնարէր. սքանչելի յարմարութիւն ունէր այն ամեն ուսման, որ թռիչ եւ սլացում կուտայ մտաց :

Իրեն աւանդուած դասերուն դէմ յաճախ այնպիսի իմաստալից դիտողութիւններ եւ հարցումներ կ'ուղղէր ուսուցչաց, որք կը հիանային տեսնելով այդ պատանւոյն վրայ աղատ դատողութիւն, քննասէր հոգի եւ իւր դասերն ինքնօգնութեամբ ուսանելու ջերմ ժրջանութիւն :

Կալիլէ թէեւ արհեստից ճաշակ ունէր, թէեւ սքանչելի կերպով վին կ'ածէր, գը-

ծագրութեան մէջ զարմանալի յաջողակութիւններ կը ցուցնէր, կը յալէր նաեւ գըրադիտութիւնն ու բանաստեղծութիւնը, բայց իւր ամենէն աւելի սիրած բանն էր գիտութեանց ուսումն :

Հայրը փափաքելով իւր որդին շահաւոր գործի մը մէջ զարգացնել, զայն զրկեց Բիզայի համալսարանը, բժշկութիւն եւ փիլիսոփայութիւն ուսանելու համար. բայց դպրոցական դասերն՝ միօրինակութեամբ ձանձրանալի՝ անբաւական էին մեր եռանդուն պատանւոյն նորասէր եւ հետաքրքիր ոգին գոհացնելու. սկսած էր չափադիտական եւ բնագիտական գրոց ընթերցման պարապիլ :

Հաղիւ 19 տարեկան էր, երբ օր մը Բիզայի մայր եկեղեցւոյն մէջ ուշադրութիւնը կեդրոնացաւ ձեղունէն կախուած կանթեղի մը վրայ, որ՝ վառուած պահուն ուղղաձիգ զիրքէն շարժած՝ կը ճօճէր յաջ եւ ահեակ. երիտասարդն աչերն սեւեռեց եւ ընդերկար դիտեց ճօճումն. իրեն այնպէս թուեցաւ թէ կանթեղին յաջորդական ճօճումը օդին մէջ գծուած եռանկեան թէ՛ երկար եւ թէ՛ կարճ աղեղներն մի եւ նոյն ժամանակամիջոցին մէջ կ'աւարտէին : Բայց պէտք էր փորձել. մատը դրաւ բազկերակին վրայ եւ աչերն ուղղեց ճօճման մեծագոյն աղեղին այսինքն այն կէտին վրայ, ուր կանթեղն կապուած էր զինքը կախող չուանէն. համրեց բազկերակին զարկերն մինչեւ որ լրացաւ ճօճում մը մէկ կողմէ դէպ ի միւս. ապա աչքերն ուղղեց նոյն կէտէն վեր մի ուրիշ կէտի վրայ, յետոյ աւելի բարձր կէտերուն վրայ, եւ տեսաւ թէ բազկերակն քանի անգամ որ զարկած էր ճօճման մեծագոյն աղեղին լրման ժամանակամիջոցին մէջ, նոյնքան անգամ՝ ո՛չ աւելի ո՛չ պակաս՝ զարկած էր եւ միւս իրարմէ աստիճանաբար կարճ աղեղներու լրման ժամանակամիջոցներուն մէջ :

Երիտասարդ զննիչն քանիցս քննելով այդ երեւոյթը, զոր իրմէ առաջ միլիոնաւոր մարդիկ տեսած բայց փոյթ ըրած չէին, զարմացաւ անոր անփոփոխ միօրինակութեան վրայ, եւ սկսաւ հետեւութիւններ փնտռել :

Երեւակայեց թէ չէնքի մը վերէն կախուած չուանի մը ճօճման ժամանակամիջոցին

տեւողութեամբ կարելի պիտի լինի նոյն չէն. քին բարձրութիւնը չափել:

Այս կերպով գտաւ ճոճանակի օրէնքներն, որ ժամանակը ճշդիւ չափելու համար այնքան օգտակար եղած են գիտութեան:

Այնուհետեւ ինքզինքն հոգւով մարմնով գիտութեան նուիրելով՝ սկսաւ նախնի երկրաչափներու գործերն ուսումնասիրել. Արքիմեդէսի Հելլոֆէրս մէջ Լուպուլ մարմնեւուն թեքցումն առաջնորդեց զինքն ջրաբաշխական կշիռն հնարելու:

Կը պատմեն թէ Վիչենցիոս վախճալով որ մի գուցէ իւր որդին բժշկական դասերն լըքանէ, արգիլած էր չափագիտական ուսմանց պարապիլն. բայց միթէ կարելի՞ էր:

Աղբատ հայրն ժամանակէ մ' ետքը չը կրնալով իւր որդւոյն դպրոցական ծախքերն հայթայթել՝ Կալիլէ ստիպուեցաւ հրաժեշտ տալ ուսանողական կենաց. բայց օրովհետեւ արդէն քաջ չափագէտ մ' եղած էր, ընդունուեցաւ նոյն իսկ այն համալսարանին մէջ, զոր ստիպուած էր թողուլ իրր ուսանող:

Այդ միջոցին Կալիլէ 25 տարեկան էր եւ կ'ստանար տարին 500 ֆրանքի թոշակ, որով անշուշտ կրնար իւր ծախքերը տնտեսել, առանց սակայն պետք եղածին չափ օգնել կարենալու իւր կարօտ ընտանեաց:

Գասախօսութենէն աւելցած ժամերուն մէջ կ'աշխատէր բնագիտական եւ մեքենայ գիտական զանազան խնդրոց լուծման:

Այդ աշխատութեանց միջոցին Կալիլէ հանդիպեցաւ մարմնոց անկման օրինաց վերաբերեալ Արիստոտէլի արտայայտած կարծեաց, զորս սխալ կը գտնէր:

Յիշենք աստ՝ փակագծի մէջ՝ թէ այն աստեղներն Եւրոպիոյ համալսարանաց մէջ աւանդուած գիտութիւնք սահմանափակուած էին այն նեղ չորհանակին մէջ, զոր երբեմն գծած էր Արիստոտէլ (ծնեալ 384 ին Ն. Ք.). այդ յոյն փիլիսոփային ամեն սուսններն կը նկատուէին իրր բացարձակ ճշմարտութիւններ, հետեւաբար անվիճաբանելի եւ անժխտելի. ո՞վ որ յանդգնէր Մեծին Աղեքսանդրիոյ դատաւարակին կարծեացը դէմ գիտողութիւն ընել, մահուան արժանի էր:

Հին իմաստասիրաց մէջ երկարատեւ վիճաբանութեանց առարկայ եղած էր մարմ-

նոց անկման արագութիւնն, զոր Արիստոտէլ այսպէս սահմանած էր. « Վերէն վար թող տրուած մարմնոյ ծանրագոյններն աւելի արագ կ'իյնան քան թեթեւներն »:

Կալիլէ մտածեց թէ ամեն մարմնոց՝ ծանր կամ թեթեւ՝ անկման արագութիւնը պարտի մի եւ նոյն լինիլ, եւ թէ տեսնուած տարբերութիւնն օդոյ դիմադրութեան վերադրելի է քան այլ պատճառի:

Աւտի անմիջապէս փորձի սկսաւ Բիզայի հոչակաւոր հակեալ աշտարակին վրայ, ի ներկայութեան բազմաթիւ ուսանողաց եւ կաճառորդաց. տարբեր ծանրութիւններ ունեցող հինգ տեսակ նիւթ երէ, ոսկի, կապար, պղինձ, մարմար, մեղրամոմ, գնտակներ պատրաստած էր համահաւասար տրամագծով, զորս մի ըստ միոյ՝ թող տուաւ աշտարակին վրայէն, եւ տեսնուեցաւ թէ որքան ժամանակամիջոցի մէջ որ ինկած էր ծանրագոյնն՝ ոսկեղէն գնտակն, ճիշդ նոյնքան ժամանակամիջոցին մէջ ինկած էին եւ միւս իրարմէ աստիճանաբար նուազ կըլուողներն:

Աւելի պարզ փորձով մը կրնանք հասկընալ Կալիլէի այդ դաղափարն. առնունք երկու թերթ թուղթ համահաւասար տարածութեամբ եւ համակշիռ ծանրութեամբ, թող տանք զայնս բարձր տեղէ մը. պիտի տեսնենք թէ երկուքն ալ մի եւ նոյն ժամանակամիջոցին մէջ գետին կ'իյնան. արդ թղթերու մին ճմռթկելով կարելի եղածին չափ սեղմենք, ոլորենք, այնպէս որ գնտանման ձեւ մ'առնու եւ կրկնենք մի եւ փորձը. պիտի տեսնենք, այս անգամ, թէ գընտուծեւ թուղթն, որոյ կշիռն ո՛չ յաւելում եւ ո՛չ նուազում կրած էր, աւելի շուտ պիտի իյնայ քան զմիւսն:

Այն օրէն սկսեալ՝ Արիստոտէլեանք յաւերիմ թշնամի եղան Կալիլէի, որ իւր այդ փորձով հնաւուրց փիլիսոփային մէկ սխալը գտած էր. պատրուակ կը փնտուէին համալսարանի դռներն փակելու նորա առջեւ. այդ պատրուակը չ'ուշացաւ:

Ժան առ Մէտիչի իշխանն Լիվորնօ քաղաքի նաւահանգիստը մաքրելու համար մեքենայ մը հնարած եւ զայն Կալիլէի գիտողութեան ներկայած էր. մեր երիասարդ մեքենագէտն յանդգնած էր յայտարարել թէ մեքենային չէր հաւանած: Արիստոտէլին սը-

խալը գտնե՛լ. իշխանին հնարած մեքենային չը հաւնի՛լ: Բնականաբար իշխանն եւ նորա շողքորթներն եւս կուգային ստուարացնել Կալիլէի թշնամեաց խուժըն:

Երիտասարդ ուսուցիչն ստիպուեցաւ մեկնիլ Բիզայէն եւ իւր բարեկամաց պաշտպանութեամբ Բատուայի համալսարանը մըտաւ իրր ուսուցիչ չափազերիութեան:

Յ. ԹԱԹԱՐԵԱՆ

(Մնացեալն յաջորդ խոսքով)

ՆՈՐԱՆԷՄ

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴ ՄԸ

(Շար. նախորդ թուէն)

— Բայց վերջապէս այս մարդս ի՞նչ ունի ինձի դէմ, կ'ըսէր կամաց կամաց լալով, սպասաւորներն ոտք չը հանելու համար ծայն չը հանելով: Ես իրեն համար ունիմ ա՛յն ամէն յարգանքն ու պատիւն՝ զորս կին մը կրնայ ունենալ իւր ամուսնոյն համար: Նիւթական բարեկեցութեան համար կը հսկեմ որ բանի մը պակասութիւն չ'ունենայ, եւ կրնամ առանց ինքզինքս շողքորթելու ըսել թէ տունս շատ կանոնաւոր տուն մի է. բան մը զանց չեմ ըներ իրեն հաճելի ընկեր մը ըլլալու համար: Կը կարդամ իւր լրագիրներն ու հանդէսները՝ որոնք գլուխս կը ճաթեցնեն, որպէս զի կարենամ իրեն պատասխանել երբ խօսելու ըլլայ աղոնց վերայ: Միշտ պատրաստ եմ հետը դուրս ելնելու թէ որ օդ առնելու փափաքի, կամ տունը մնալու, թէ որ տեղէն երերալ չ'ուզէ: Իրեն ընտրութեանը կը թողում իմ հաքներըս, կապուելիքս: Չունիմ անանկ բարեկամ մը կամ բարեկամուհի մը որոնց սէրը կասկած պատճառէ իրեն: Ես միայն զինքը կը սիրեմ աշխարհի վրայ եւ փոխադարձութիւն ալ չեմ ուզեր թէ եւ իրաւունք ալ ունիմ. իւր բոլոր բարեկամները սիրով կ'ընդունիմ, թէպէտ եւ ասոնք հընադգեստ դպրոցի ընկերներ, բանակի ըսպաներ են որ միշտ բարեկիրթ չեն, կամ

նոր բարեկամներ՝ որոնց համար մարդ պատասխանատու չէ: Մինչեւ անգամ տիկին տ'Օսթրաքը տեսնելու հաւանեցայ, որն որ անշուշտ մարգարիտ մի չէ: Ասկից աւելի ի՞նչ կրնամ ընել:

— Սիրելի դաւակ, ըսաւ հայրը, ամենն այս չէ. մարդս ո՛րչափ կատարեալ կին մ'ալ ունենայ, եթէ բնաւորութիւնը գէշ է, կարելի չէ արգելել զինքը չուելէ: Ան մինակ գացած չէ:

— Ո՛հ, ես ադոր չեմ հաւատար. նա՛ միանգամ մոռցաւ ի՛նչ որ ինձ եւ իւր անձին պարտական էր. ա՛յն ալ անկարեւոր քմահաճութիւն մ'էր, եւ երկար ատենէ ի վեր ա՛յդ ալ վերջացած է: Ասկից դատ, երբ միւս երկու անգամին որ ձգեց դնաց, զինքը գտան միայնակ ա՛յնպիսի տեղ մը՝ որ բնաւ կասկածանաց տեղի չէր տար: Եւ դարձեալ այս անգամ կ'երգնում որ հետը բնաւ մէկը չը կայ: Ո՛հ, վասն զի նա ինձի դէմ ատելութիւն մ'ունի, անբացատրելի ատելութիւն մը:

— Յաւալին ա՛յն է որ, ըսաւ մայրը, զաւակ չ'ունիք. մարդ կինը կը թողու բայց զաւակները չը թողուր:

— Անշուշտ շատ ցաւալի բան է այս, պատասխանեց Տիկին տ'Արվիլ. բայց ի՞նչ կրնամ ընել ես ասոր: Զգե՛լ երթալով չը փոխուիր այս վիճակս:

— Վերջապէս, ըսին, հիմակ խնդիրը զանի նորէն գտնելու վրան է:

Ասոր վրայ՝ բոլոր գերդաստանն իսկոյն ձեռնարկեց գործի. նամակ գրուեցաւ ամէն կողմ, ա՛յն ամէն առձանց՝ որ ո՛ր եւ է երկրի մը մէջ կարող կ'ըլլային Պարոն տ'Արվիլը տեսնելու կամ անոր վրայ խօսուիլը լսելու առիթն ունենալ, և ամէն օգտակար տնօրէնութիւններն ձեռք առնելէ վերջը, հարկ եղաւ համբերութեամբ սպասել:

Իսկ Տիկին տ'Արվիլ տուն դառնալով՝ իւր վաղածամ եւ ժամանակաւոր այրիութիւնը կարգադրելու համար հրամաններ տուաւ: Իւր դուռը դոցեց ամէն մարդու առջեւ, չ'ուզելով եւ ո՛չ զոք ընդունիլ ի բացակայութեան իւր ամուսնոյն, միայն իւր հայրն ու մայրը, Պարոն տ'Արվիլի ծերունի քոյրն եւ եկեղեցւոյն քահանայն. դուրս կ'եւնէր միայն եկեղեցի երթալու համար, ա՛յն ալ միշտ հետը մէկն առնելով:

Վերջապէս նայեցաւ որ Ժոմէն բան, ամէն ժամանակ պատրաստ ըլլայ ընդունելու համար իւր ամուսինն՝ իւր վերադառնալ ուզած օրը :

Գ.

Պայծառ արեւու մը ճառագայթները թափանցած էին Սէն Բեւիէի կոշուած բանտին մինչեւ բակը, որ յատկացեալ է կասկածելի համարուած բանտարկելոց չըջագայութեան : Այս դռնաթափ դիմօք եւ ցնցոտեօք հագուած թշուառաց մէջ առաջին ակնարկով կ'որոշուէին երկու մարդ որ հոս եկած էին սխալմամբ :

Ասոնցմէ մին նոր, մաքուր եւ պատուական զգեստներ հագած էր, եւ Նիքօլա Տիւբօրն էր այս : Բանտին արձանագրութեանց նայելով կը տեսնուէր թէ այս մարդս բանտն եկած էր ողորմելի վիճակի մը մէջ, հագած հին քանակ մը, աղտոտ փէրքի մը, մերկտան, գլուխը բաց, առանց շապիկի եւ առանց թաշկինակի : Ունէր միայն 37 ֆըրանք 50 սանթիմ, որ դրուած էր բանտին անտուկը :

Այս վիճակիս վրայ արդահատելով տնօրէնը, անմիջապէս այս եղելութիւնս հաղորդէր էր բանտարկելոց զգեստներն հոգացող ընկերութեան նախագահուհւոյն, որն որ մէկը խրկեր էր, եւ նա՝ նորեկին բացարձակ մերկութիւնը քններ եւ բարեկիրթ մարդ մ'ըլլալը ճանչցեր էր :

Նիքօլա Տիւբօր յայտներ էր ազատաբար իւր թշուառութիւնը, եւ փափաք ցուցուցեր էր ունենալու վայելուչ հանդերձներ, նա՝ մանաւանդ ձերմակեղէն, որուն պակասութեանը վրայ շատ կը ցաւէր : Իւր այս օրինաւոր փափաքը լրացուցած էին անյապաղ խոստում առնելով իրմէ առանց վիճաբանութեան, թէ պիտի համաձայնէր բարեգործական ընկերութեանց կանոնադրութեանց՝ որոնց նպատակն էր բարեխառնութիւնը տարածել, ծխախոտի զեղծումը բառնալ եւ քաջալերել ի բարին : Ընկերութեան այս առատաստուութեան վրայ Նիքօլա Տիւբօր ուստիկանութեան գործակալին դարձուցած էր շնորհակալութեան նամակաւ մը իւր զգեստները՝ որք թէպէտ

եւ հին, սակայն ճոխութեան կերպարանք մ'ունէին :

Միւս մարդը բնաւ իրաւունք չ'ունէր մի եւ նոյն նպատակին, վասն զի հագնւած եկած էր : Իւր հանդերձներն շատ վայելուչ էին, որով մասնաւոր թշուառութեան մը կերպարանքն ստացած էր : Վասն զի շը կայ ա'յնչափ տղեղ բան մը՝ որչափ նորածեւ աղտոտ շապիկ մը : Փայլուն՝ իսկ գարշապարները ծածկող զօրիկներ, եւ անօրինակ եւ գէշցած զգեստ մը : Ասոր անունը Արթուր Քօփէ էր : Բայց ա'յս անունով ճանչցուած չ'էր : Վասն զի իւր կենաց զանազան պարագայներուն մէջ աւելի նախամեծար անուններ կրած էր, ինչպէս Ղէսթիւթիէր, Լա Ռօքի կոմս, Քապալիէրի եւ Բօլսիտօֆ : Կ'ըսէին որ առանց օրինաւոր պատճառի զանազան դռնաբաններ սեպհականած էր իրեն :

Բարեսիրական ընտանութիւն մը հաստատուած էր սկիզբէն այս երկու բանտարկելոց մէջ տեղ, որով հակապատկեր մը կը ձեւանար ա'յն գինեմուլաց, աղքատ դողբուրու եւ ստորին պարահանդէսներն յաճախող մարդոց բազմութեան հետ՝ որով կը բաղկանար բանտին ժողովուրդը :

Արթուր Քօփէ տեսնելով առաջին օրը Նիքօլա Տիւբօրի ներս մտնելը ա'յն արդէն ծանօթ վիճակին մէջ, անմիջապէս հասկցած էր թէ ծանօթանալու արժանի մարդ մ'էր, եւ Նիքօլա Տիւբօր առանց իրաց խորթ թափանցելու, աւելի ընտրած էր ասոր հետ կենակցիլ քան թէ այլոց հետ, վախալով ողիւլէ :

— Ձեր գործն ո՞ր մնաց, պարոն, ըսաւ Նիքօլա Տիւբօր :

— Ես այսօր շատ գոհ չեմ : Շատ տարիներ սուս գործած եւ մուցած ոճիրներս փնտուելու եւ քննելու ելեր եմ, հետեւորար ամբաստանութեանց թիւն օր ըստ օրէ կ'աւելնայ : Այս կէտիս վրայ բարեփոխութիւն մ'ընել պէտք է : Վասն զի՝ բռնաւ նկատողութեան չ'առնուիր թէ ո՞րչափ դժուարին է ամբաստանեալի մ' ինքզինք պաշտպանել այնպիսի ամբաստանութեանց դէմ որ հեռաւոր ժամանակի մը կը վերաբերին :

— Ստոյգ է : Շատ դժուարութիւն կը

կրէ մարդ իւր անպարտութիւնը յայտնող վկայները նորէն գտնելու :

— Ասկից զատ զիս պատուիրակի (չափաշ) գրաւիւր կը կոչեն : Միայն վեց ամիս պատուիրակի գրաւորութիւն ըրի, ա՛յն ալ տաս տարի առաջ : Եւ ես ա՛յն ատենէն ի վեր ասորեցայ միշտ ազնուականի մը պէս առանց բան մ'ընելու, ժամանակս անցունելով ձիարշախի, հանքային ջրոց բաղանեաց ակումբոց, թատրոններու եւ մասնաւոր սենեակներու մէջ : Սակայն ասոնց համար ես միշտ պատուիրակի մը գրաւորն եմ. կը տեսնէք որ նշանակութիւն չ'ունի այս բանս :

— Զարմանալի բաներ կ'ըլլան : Դուք ինձի չ'ըսի՞ք որ ձեր առած անուններուն կը հակառակին : Ինձի համար ալ բոլորովին ասոր հակառակն է. ես բնաւ անուն չեմ ընդունիր, եւ բռնի անուն մը կուտան ինձի : Կը տեսնէ՞ք որ բնաւ օրինաւորութիւն չը կայ :

Յետոյ, յանկարծ միտքը փոխելով, Նիքօլա Տիւբօր յաւելցուց կատարեալ երանութեան եղանակաւ մը .

— Ի՛նչ գեղեցիկ օդ :

— Այո՛, պատասխանեց Արթուր Քօփէ, նուազ կենդանի եղանակաւ. դուքսը շատ գեղեցիկ ըլլաւու է :

— Ստուգապէս, մարդ շատ հանգիստ է հոս :

— Բայց կին չը կայ :

— Ո՛չ, ո՛չ :

— Ո՞ր կը տեսնէք հոս կին :

— Փառք Աստուծոյ, կին չեմ տեսներ հոս. եւ կին չը տեսնելու համար բանտարկել տուի ինքզինքս :

— Զեր գաղտնեաց խորը թափանցել չեմ ուզեր, պա՛րոն, բայց չեմ կրնար հասկընալ թէ . . .

— Կեցէ՛ք, ես կրնամ ձեզ պատմել իմ պատմութիւնս. եւ զիս մատնելով բնաւ շահ մը չէք կրնար ունենալ, միայն կ'աղաչեմ ձեզի, որ ուշադրութիւն ընէք ըսելիքներէս բան մը չը յայտնելու մէկու մը : Դուք սլարկեշտ մարդ մի էք . . .

— Այս տունս՝ ուր պատահեցանք իրարու, կրնայ ձեզի երաշխաւոր ըլլալ այս բանիս, պատասխանեց Արթուր Քօփէ, խոնարհելով չնական ժպիտով մը :

— Ես երջանիկ էի, պա՛րոն, չեմ գիտեր

ի՛նչ հով փչեց գլխուս, ուզեցի աւելի երջանիկ ըլլալ : Զիս ամուսնացնել ուզեցին, եւ ես ականջ դրի այս աղէտալի խրատուս, որն որ սակայն պէտք էր զարթուցանել իմ կասկածանքս, վասն զի իմ լաւագոյն բարեկամներէս կուգար ինձի : Մի կարծէք թէ ես ամուսնութիւնը քննադատել կ'ուզեմ. կ'ուզեմ զայն համարէ ամենամեծ բարիք մը կամ հարկաւոր չարիք մը, ամուսնութիւնն իրաւացի բան մ'է : Բայց օ՛րպիտի չըջահայեցութեամբ պէտք է կատարել զայն : Քիչ մը գիտնալով այս բանս՝ իմ ընտրութիւնս ըրի ամէն երեւակայելի երաշխաւորութեամբ. ունէի հարստութիւն, գեղեցիկ անուն մը, եւ արտաքին կերպարանք մը՝ որուն մնացորդը կը տեսնէք, եւ հետեւաբար կրնայի ընտրել բաւական ընդարձակ շրջանակի մը մէջ : Շատ պատուաւոր ընտանեաց աղջիկները մերժեցի, վասն զի միշտ անոնց վրայ կը տեսնէի բան մը՝ որ բոլորովին կատարեալ չ'էր : Ինձի կ'ըսէին որ աղէկ բան մը չ'էր ըրածս, թէ պէտք չ'է ա՛յդչափ պահանջող ըլլալ. թէ երջանկութիւնն աւելի կամ նուազ պակասութիւններէ կախում չ'ունի. ես այս ամէնուս չէի ուզեր հաւատալ : Ես կը պնդէի գտնել կին մը՝ որուն դէմ բան մը չը կրնայ ըսուիլ :

— Ա՛հ, կեցի՛ք շունչ առնեմ : Ըսել է թէ ամուրի մնացիք :

— Ո՛չ, ամուսնացայ :

— Ըսել է թէ ձեր պահանջումները բոլորովին մէկ կողմ դրիք :

— Բնաւ ամենեւին : Ես կատարեալ կին մ'առի :

— Հիմակ կը հասկնամ : Երբ հետն ամուսնացաք՝ կատարեալ էր, բայց յետոյ . . .

— Ո՛չ, չը հասկցաք. նա՛ միշտ կատարեալ է. եւ ահա՛ այս բանս է որ իմ կեանքս կը թշուառացնէ : Ամէն բան լաւ էր, հարստութիւնը բաւական՝ առանց անհամեմատութեան : Ընտանիքը՝ անսքիւտ ընտանիք մը. ինքը հրեշտակ մը : Բարեկիրթ, ազատ ցուցամոլութենէ. ուսեալ եւ ո՛չ իմաստակ : Դաշնակ գիտէ բայց չը զարներ : Ո՛չ թէ գեղեցիկ է ա՛յն գեղեցկութեամբ՝ որ գոռոզութեան աղբիւր մ'է կնոջ համար, եւ տանջանաց աղբիւր մը՝ ամուսնոյն համար, ա՛յլ ունի կանոնաւոր դէմք մը եւ վայելուչ հասակ մը : Երբ հետն ամուսնա-

ցայ, երիտասարդ աղջկան մը վայել համեստութիւն մ'ունէր. յետոյ, առաւ ան համարձակութիւնը՝ զոր կին մը պարտի ունենալ, առանց կորուստներու իւր սեռին բնական եղած զգուշութիւնը: Երբ հետն ամուսնանալ ուզեցի, բնաւ արհամարհանք մը չը յայտնեց իմ անձիս համար. ո՛չ ալ անպարանք մը ցցուց, որ կրնար անխոհական երեւիլ. հետեւապէս ամուսնացաւ իւր ծնողաց կամօքը, ան ճշմարիտ համոզմամբ թէ իւր ամուսնութիւնն իրեն համար մեծ բարութիւն մ'էր: Ամուսնութեանս նախընթաց օրը անհանգստութիւն մը տիրեց սրտիս: Իմ առած տեղեկութիւններս կարելի եղածին չափ կատարեալ, խորին եւ նուրբ ըլլալով հանգերձ, բնաւ փոքրիկ պակասութիւն մը չ'էի գտած: Եւ ահա՛ այս էր որ զիս անհանգիստ կ'ընէր:

Թարգմանեց

ԿԱՍՏՈՆ ՊԵՐՃԸՆԻՔ ԳԱՅՐԻԷԼ ԳՐԱՍԷՐԵԱՆ
(Շարունակելի)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՈՐՈՐՈՑԻ ՔՈՒՆԸ

Իր հանգըստեան ժամուն մայրիկն է որդին
Որորոցում զըրած չէմին վրայ տան,
Նըստում քովիկն առանձին,
Պահպանելու էլ նըրան:

Ու շարժելիս զանի կամաց մէկ ոտքով
Ճարտար մանում է նէ հագուստ մ'ոսկեթել,
Չաւկին անուշ երգելով,
Ճակատը գոհ երազել:

Մանուկն յենած գըլուխն առջև ծոցիկին տակ,
Կարծես խընձոր տերեւներուն մէջ ինկած,
Շընչով բերնին կիսափակ
Այսպէս քընում քըրտընած:

Եւ պըսպըղուն ժըպիտ նըման նշուրի
Իր այտերէն վարդուկ սահում է թեթեւ,
Բայց չը բացուում են էլի
Իր զարմացող աչեր սեւ:

Տեսիլք պատել է ոսկեղօծ իրբեւ ամպ.
Ո՛րչափ աշխարհ ցուցընում էր հրաշալիք:

Սիրտն ապրելու բերկրութեամբ,
Ծածանում էր զինքն ալիք:

Երկինք տեսել էր, ուր ամբիժ արեւակ,
Հոսանք լուսի, եւ կենդանի գոյն ծաւալ,
Հետըզհետէ աստղափակ,
Անհունութեամբ պըլպըլալ:

Երկիր, ծով, հո՛ն գընում են որ միանան,
Կանանչ հագած մերկ հող, մեռելք ծածկըին
Սըփուում ծաղկանց ծիածան,
Ճերմակ փըրփուր անդունդին:

Գեղեցիկ էր մահացուին առջի օր,
Երբ երկընքի՝ երկրի միջում զինք գըտաւ,
Տեսարան մ'էր վեհ, միշտ նոր,
Ո՛հ նոցա մընաց լուկ իրաւ:

Նա կապանքէն հիմայ կարծում էր ազատ
Բարձր սլանալ, ճաճանչներում կորստ-
ւած,

Մի ձայն լըսուա հարազատ,
Վար նայեցաւ զարմացած:

Եւ հովտի մէջ հընչում էին մօր երգեր,
Մազեր ցըրւած, արցունք թափում են աչիք
Նէրան կանչեց անհամբեր,
Ծալեց թեւեր սինդ կըրծիկ:

Իսկ բարեպաշտ մըտածութեամբ մ'իրեն մայր
Կարծեց հրեշտակ իջել որդուն է վերեւ,
Սըփուած արծաթ թեւին ծայր
Շուրջ հովանոյ առնէ ձեւ:

Մըրմընջելով աղօթք չօգել է կամաց,
Սյնպէս սըրտանց ըզմայլմանքից վեհ սի-
ւոյն,

Ձոր մանկութեան էր սորված
Ձինչ անմեղին, հեշտագոյն:

Եւ ի՛նչքան քունն որորոցի է դիւրին,
Լուռ կերպարանք արդին ծիծաղ ընծայում,
Գարնան ունի նորածին
Կըրքեր մեղմով հեզ ազդում:

Ան որ եղաւ յետոյ սարսափ չարագործ՝
Չառա՞ւ նոյնպէս շընորհալից հոս մըրափ,
Եւ ոճիրին դեռ անփորձ
Էր կարմիրուկ նըրան ափ:

Հոս անմեղուկ, էակ անկար, կ'ախորժին
Դիտել խարտէջ գըլխ, սիւտակ ճիտ կաթ-
նազեղ,

Համբոյր ծըլած ծընօտին՝
Տըւին դէմքին սիրագեղ:

Այլուի քիչ մ'էլ, եւ չ'ընին 'տի մարդիկ
Ասանկ ներող, կամ հաճութեամբ ինքնատուր
Տի խնայքերն քէնով լիք
Բաժակին չա'տ հեղ մըրուր :

Հանգչի'ր, սիրուն մանուկ, հիմիկ դու
հանգչի'ր .
Ո'ւր են ժամերս անոյշ կեանքում ապագայ,
Երբ թընամին աչքով ժիր
Գիտես հըսկում քու վըրայ :

Հէնց 'տի խընդրես իբրեւ հոգին, ձանձ-
րութեան
Ըսիտիիչ դեղ մ'ըստոյդ . քընի'ր դու մանուկ,
Զի պարգեւել քուն նըման
Մայրն է անշուշտ կարող լուկ :

Իրմէ անչա'փ ես հեռացած դեռատի,
Աչքըս թըրթուռն էր գիշերւան առ կասկած,
Դըրած ձեռքերս յիմ սըրտի,
Եւ պատճառում թոթով լաց :

Իդէս հառաչով, դիտեմ դողդոջ վայլ մ'օրւան
Հոգ' լերկ, ձերմակ պատին վըրայ սողալով,
Աւա'ղ, չըկար մայրական
Խըրախուսիչ ինձ գորով :

Արդ խոր լուութեան մէջ է զարթնում հող-
մերեր
Խուճապահար ոչինչն ինկած իբր հոգիս .
Անկեց իմին խորհուրդներ
Գունաւորում անցնելիս :

Ծով մ'է հեռուն ծըմող արեւն եւ խաւար .
Անշարժ բարձեր սըղմում, տեսիլքն անհալած
Ի զուր լուսով դալկահար
Փարատելու եմ ջանած :

Ո'հ թէ դադար մ'ընի'ր դաշտում արեւոտ,
Մառի շուքին տակ կարենամ առնել նիստ,
Օրւայ տաքին զով է խոտ,
Մերժել ամէն միտքեր խիստ :

Մըտիկ անել միայն հովուն սաստկացող,
Մածուկ ջըրին կարկաջածայն հեւ խաղաղ,
Ինչո'ւ յուսամ, անկարող,
Լուկ հանգըստեան բարով պաղ :

Մըտածելով ասանկ իմա'լ է տըխուր
Որորոցին մօտ որ կեանքով տալիս յորդ,
Շիրմին դատարկ, ուր ի զո'ւր
Անչափ թափեն քաջ 'ւ օրւորդ :

Բայց պէտք եղաւ որչափ զըրկանք, ո'ր խը-
նամ,

Այս բանալու համար աչեր սիրալիստ,
Եւ ո'նց փութով էլ թառամ
Գոցւին պիտոր, վա'խ խալառ :

Ուր մարդկային խեղճ բաղդին չէ' բաւական
Որ այն վայրկեան անփախչելի պիտի դայ,
Իբրեւ յատուկ որս մահւան,
Իր ձեռքն խնալ անխընայ :

Այլ դառնութեամբ լի սիրտ երկար սպա-
սելուց
Կարծես վերջին մի փափաք զա'յս է խընդրում
Հասցրել տեղեակ առաջուց
Գէթ իր անհուն ցաւերում :

Այո', մանուկ, թէպէտ անդէտ, նոյն և քեզ
Անշուշտ մաղթում էի փափուկ օրերուդ
Բըլրի ձերմակ ծաղկին պէս
Դիւրանցիկ մահ զինչ օգուտ :

Ո'հ թէ չէի գիտել, անչա'փ սիրոյ մօր
Դու առարկայ, իր աղուական յոյս կեան-
քում,
Շատ արցունքով էլ թորթոր
Եղար միայն մէկ խընտում :
Վ. ՍԸՎԱՃԵԱՆ

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՍԵՊՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսացի երեւելի իմաստասէր մը, Պ. Ատուլֆ
Ֆրանք, վերջերս հրատարակած է « Իմաստասիրու-
թիւն քաղաքային իրաւաբանութեան » անուն գործ
մը, ոյր վրայ կը գտնենք ընտիր քննադատութիւն մը
« Ֆրանսացի տնտեսագէտ » ին մէջ : Առանց ամբող-
ջապէս ներկայելու մեր ընթերցողաց այդ յօդուածն,
յարմար կը դատենք թարգմանել հետեւեալ մասն
որ աւելի մատչելի է մեր ընթերցողաց :

... Սակայն տեսութիւն մը որ ըստ
ինձ մէկէ աւելի ծանր առարկութիւններ
կը վերցնէ, այն է զոր Պ. Ֆրանք կուտայ
« մտաւորական սեպհականութեան » վրայ
եւ զոր իրեն հետ քանի մը տնտեսագէտք,
մասնաւորապէս Պ. Ֆրէտէրիք Բասի ընդու-
նած են :

« Մտաւորական սեպհականութեան » տեւողութիւնը պարտի սահմանաւորիլ օրէնքէն : Կը յիշուի թերեւս թէ այս խնդիր առաջարկուեցաւ եօթն ամիս առաջ քաղաքային տնտեսագիտութիւն Ընկերութեան : Վիճաքանութեան նկարագրութիւնն ընելէ յետոյ, համարձակեցայ կարծիք յայտնել թէ մտաւորական սեպհականութեան տեւողութիւնը սահմանաւորել ուղղներն ալ չուղղներն ալ իրաւունք ունէին . թէ առաջինը մեծապէս անիրաւ են ընկերութեան վերագրելով կարծեցեալ իրաւունք մը գեղարուեստից և գրականութեան գործերուն, գիւտերուն եւ հնարքներուն, ի մի բան մտքին արտադրութեանց վրայ, եւ թէ, միւս կողմէ, նմանապէս սխալ է Պ. Բասիի նման կարծել թէ մտաւորական սեպհականութիւնն ալ տեսակ մը սեպհականութիւն է միւս ամեն սեպհականութեանց նման . Պ. Ֆրանք եւս կը պաշտպանէ զայս վերջին փաստ : Նոյն իսկ աւելի առաջ կ'երթայ . « Եթէ աշխարհիս մէջ, կը գրէ, կայ օրինաւոր, նուիրական, անժխտելի սեպհականութիւն մը, այն ալ սեպհականութիւնն է մտքին գործոց, երեւակայութեան եւ իմացականութեան գործոց որք նիւթէն կ'առնուն միայն արտայայտման միջոց մը, և մնացեալը փոխ առնելով մարդկային հոգւոյն ոյժերէն միայն, մեծցուցած են մարդկային սեռին հոգեկան ստացուածքը : Սակայն և այնպէս, մի միայն այդ սեպհականութիւնն է որ երկար դարեր բոլորովին անձանօթ մնացած է եւ տակաւին այսօր իսկ կերպիւ իւրի խղճուած է բազմութիւն զսպողական օրինաց ներքեւ . տարակոյսներ կը յարուցանէ եւ թշնամիներ կը գտնէ նոյն իսկ անոնց մէջ որոց շահը կը պահանջէր պաշտպանել զայն : »

Պ. Ֆրանք կը սխալի նախ երբ կ'ըսէ . « Մտաւորական սեպհականութիւնն այսօր խեղդուած է զսպողական օրինաց ներքեւ » : Ճշմարտութիւնն այն է թէ կը պաշտպանուի, կ'երաշխաւորուի անբաւական, թերի, անկապակից օրէնքներով . ասի մի եւ նոյն բանը չէ : Դալով այն մարդոց որք պարտէին հոգ տանիլ մտաւորական սեպհականութեան մասին եւ որք նորա եթէ ոչ « թըշնամիներն » գէթ հակառակորդներն են, սոքա ընդհանրապէս ընկերվարականներ են

որք Պ. Ֆրանքի նման (Պ. Ֆրանք ատո՛հաբան, — ոչ թէ Պ. Ֆրանք մատենագիր), կ'ուզեն Տէրութիւնն ընել ազգին մեծ կըրթիչն եւ նորա ամեն արուեստական, գիտական եւ գրական գանձուց գերիշխան աւանդապահն : Այլ կը խնդրեմ գիտուն իմաստասէրէն որ չը շփոթէ զիս անոնց հետ որք կը դաւանին այդ վարդապետութիւնը : Եւ ո՛չ հակառակորդ, ո՛չ ալ թշնամի եմ մտաւորական սեպհականութեան : Պարզապէս տգէտ մ'եմ որ լաւ չը գիտեր թէ ի՛նչ է այդ սեպհականութիւնն եւ կը խորհիմ թէ օրէնադիրք որ զանց ըրած են զայն հին դրութեան ներքեւ, եւ անոնք որք փորձած են խենդ ու խելառ կանոնի ներքեւ դնել զայն Յեղափոխութենէն ի վեր, եւ Պ. Բասիի նման տնտեսագէտք, եւ Պ. Լիմուզէնի նման ընկերվարականք, եւ Պ. Ֆրանքի նման իմաստասէրք ինձմէ աւելի բան մը չեն գիտեր : Ըստ իս, գէթ պարտէին մտածել թէ հաւանաբար, եթէ մը մտաւորական սեպհականութիւնն այսպէս զանց առնուած է անցելոյն մէջ եւ մինչեւ այսօր գէշ կարգադրուած եւ պաշտպանուած է, պատճառ մը կայ և զօրաւոր պատճառ մը . առանց որոյ, ինչո՞ւ համար նիւթական սեպհականութիւնն այնքան բացորոշ եւ զօրաւոր երաշխաւորութեամբ շրջապատող օրէնադիրներն անհոգ, չարակամ եւ վարանոտ պիտի լինէին մտաւորական ազնիւ սեպհականութեան նկատմամբ : Արդ, այս առերեւոյթ անհեթեթութեան պատճառը պարզ է . տպահովապէս, եթէ, ինչպէս կը կարծէ Պ. Բասի, մտաւորական սեպհականութիւնը « սեպհականութիւն մը լինէր ուրիշ ամեն սեպհականութեանց նման », ամեն ժամանակ պիտի եմթարկուէր մի և նոյն դրութեան որում կ'ենթարկուին միւս սեպհականութիւնք, եւ եթէ այդպէս եղած չէ, պատճառն այն է թէ ուրիշ սեպհականութեանց նման սեպհականութիւն մը չէ այն : Բառն իսկ արդէն ըստ բաւականին ցոյց կուտայ զայդ . մտաւորական սեպհականութիւն կը նշանակէ հոգեկան սեպհականութիւն . եւ հոգեկան բանի մը վրայ օրէնք դնելը դիւրին չէ : Դաշտ մը, տուն մը, գործիք մը, արժէթուղթ մը, աւասիկ դրական եւ մատչելի սեպհականութիւններ զորս մարդ կրնայ բռնել եւ հետեւաբար

պահել. նաեւ կը չափուի, կը կշռուի, թը-
ւանշաններով կը հաշուի: Այլ գաղափար
մը, յղացում մը, միթէ ասոր գիրը կ'որոշ-
ուի՞-կամ կը նշանակուի՞ Պորսային մէջ, մի-
թէ շատ անգամ ճիշդ ու ճիշդ կը գիտցուի
թէ ո՞վ է անոր հեղինակն, հետեւաբար
բուն տէրն, եւ թէ փոխանակ մէկի մի քա-
նիներ չը կա՞ն:

Եւ կը խնդրեմ, լաւ նկատողութեան
առէք զայս. մտաւորական սեպհականութեան
տարտամ անուան տակ կը շփոթուին
ամենէն աննման բաները. գրագիտական
կամ բանաստեղծական գործ մը, երաժշտ-
ական գործ մը, նկար մը, արձան մը,
գիտական գիւտ մը, ճարտարական հնարք
մը, գործարանի դրուժ մը, ես ի՞նչ գիտ-
նամ դեռ ուրիշ ինչ: Սահման չը կայ, եւ
ասպարէզ կը հրաւիրեմ այն որ կարող է
ըլի շատ բացորոշ զանազանութիւն մը դը-
նել գեղարուեստական գործոց եւ ճարտա-
րական արտադրութեանց միջեւ: Միթէ
քանդակեալ գործերը, նկարէն յախճապա-
կիները, նախուհի թուղթերը, գոհարեղէն-
ները, ոսկերչական գործերը գեղարուես-
տական առարկայներ չե՞ն: Եւ տուն մը,
միթէ ճարտարապետական գործ մը չէ՞,
այսինքն գեղարուեստական գործ մը, ըստ
որում ճարտարապետութիւնը գեղարուեստից
մէջ դասուած է: Այլ հարցնեմ, ի՞նչ նմա-
նութիւն կրնայ հաստատուիլ անշարժ կալ-
ուածի մը եւ օբեկտի մը քառաբնիկին մի-
ջեւ, ընդմէջ իւզաների պատկերի մը եւ
բանաստեղծութեան մը, չորեքարժ մեքե-
նայի մը եւ վոտիլի մը: Օրէնսդիրէ մը պա-
հանջել որ արդար օրէնքներ հաստատէ այս
ամեն տեսակ կարծեցեալ մտաւորական
սեպհականութեանց վրայ, անհեթեթ բան
մը պահանջել է: Պաշտպանութիւնն, զոր
կրնայ տալ սեպհականութեան, ուղղակի կը
համեմատի այս վերջնոյն նիւթականութեան
եւ հաստատութեան հետ: Այս պաշտպանու-
թիւն խիստ ու բացարձակ է անշարժ կալ-
ուածոց համար, եւ օրինաց առջեւ, դըժ-
եակ մը որչա՞փ ալ գեղարուեստական գործ
մը լինի, կը պատկանի՞ իւր ներքին կամ
արտաքին զարդերով՝ ոչ թէ զայնս շինող
արուեստագիտաց, այլ կալուածատէրին որ
վճարած է զայնս: Ասի արգելք մը չէ որ
ուրիշ կալուածատէր մը անոր յար եւ նը-

մանը չը չինէ եթէ ուզէ, առանց կեղծը
չինած լինելու վտանգին ենթարկուելու:
Այլ ցորչափ սեպհականութիւնը շարժական
լինի, պաշտպանութիւնը կը նուազի: Ար-
դէն, կալուածոց համար, օրէնսդիրն ըն-
դունած է թէ « ունեւն հաւասարազօր է
սեպհականութեան: »: Ի՞նչ օրէնք կ'ուզէք
որ դնէ գործի մը սեպհականութեան հա-
մար որուն գոյութեան միակ պայմանն է
հրատարակութեան թեւերուն վրայ տա-
րածուիլ ամենուրեք եւ որուն յաջողութեան
ծայրագոյն աստիճանն է բերնուց գիտցուիլ
ամեն մարդէ, եւ կամ գիտական գիւտի մը
համար որ մի եւ նոյն օրը կրնայ լինիլ երեք
կամ չորս անձերէ տարբեր տարբեր երկիր-
ներու մէջ: — Օրէնսդիրն այսօր կրցածին
չափ կը պաշտպանէ մտաւորական սեպհա-
կանութիւնն առ ժամանակ մի: Այդ պաշտ-
պանութեան անբաւականութիւնը կամ կա-
մակայութիւնն արդարացնելու համար հա-
սարակութեան եւ ինքեան իսկ տուած է
ընկերվարական պատճառներ որք բան մը
չեն արժեր, մինչդեռ կայ գերընտիր պատ-
ճառ մը, այն է անկարելիութիւնն լաւա-
գոյն բան մ'ընելու եւ ազդուաբար պաշտ-
պանելու սեպհականութիւն մը որ չունի,
ինչպէս կ'ըսեն իմաստասէրք, առարկայա-
կան (objectif) գոյութիւն:

Ուստի Պ. Ֆրանք բողոքովին խնդրէն
գուրս կ'ենէ երբ կ'ամբաստանէ օրէնսդիրն
թէ կը հարստահարէ եւ կ'արհամարհէ ար-
ուեստագէտներն եւ մատենագիրներն, երբ
կը գոչէ գեղեցիկ խանդով մը. « Սա մար-
տըն է նիւթին ընդդէմ ոգւոյն եւ զօրու-
թեան ընդդէմ օրէնքին. համարձակինք ը-
սել նաեւ, Պետութեան ընդդէմ անհատա-
կան ազատութեան, ընդդէմ մարդկային
անձին իրաւանց, որք այնքան զանց կ'առ-
նուին որքան աւելի բարձր ի գործ կը դըր-
ուին: Այլ նիւթը, զօրութիւնը, Պետու-
թեան ամենակարողութիւնը կը մօտենան ի-
րենց յաղթանակին ծայրին, որովհետեւ յետս
կ'ընկրկին, կը խոստովանին թէ պարտեալ
են: » Իրաւ որ, աւասիկ զխոյ սիրուն վերջ
մը. այլ ասի ո՛չ քաղաքային իրաւագիտու-
թիւնն է, ո՛չ քաղաքական տնտեսագիտու-
թիւնն, ո՛չ ալ իմաստասիրութիւն. պարզա-
պէս պերճախօսութիւն է: Այլ խորհիմ թէ
եթէ Պ. Ֆրանք ունենար դրական լուծում

մը այս գրական կտորին անդ դնելու համար, ի յայտ պիտի անցնէր զայն: Այլ չունի. եւ եթէ ամենէն ճարտար իրաւագէտներն հրաժարած են պաշտպանել մտաւորական սեպականութիւնն, պատճառն այն չէ՝ կ'արհամարհեն զայն — ինչո՞ւ համար պիտի արհամարհէին, միթէ իրենք ալ «մտքին աշխատողները» չեն —, պարզապէս սա թէ, ըստ Պ. տը Մոնդալամպէի խորհարհուրդ եւ ճամարիտ խօսքին, «կարելի եղած բանն է միայն օրինաւոր»:

ԱՐԹԻԻՐ ՄԱՆԺԵՆ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱՆ ԽՆԴԻՐԻ

Թիի 21.	(Մասիս Թիւ 3814)
» 25.	» » 3817)
» 26.	» » 3818)
» 27.	» » 3820)
» 28.	» » 3820)

ԽՆԴԻՐ

Թիի 29.

Երկու հետեւակից թուոց արտադրեալն է 2256. Գտնել ողն թիւերը:

Թիւ 25 խնդրոյ՝ մեզ հասած լուծումներ սխալ ըլլալով, կը յետաձգենք հրատարակութիւնն սպասելով որ ուղիղ լուծումներ ընդունինք: Նոյնպէս ի մօտոյ պիտի տրուի թիւ 21 խնդրոյ լուծումն եւս:

Քղի. Տգ. Արամ Գ. Ալեմեան և Մամբէ Աւետիսեան, աշակք. Հ. Մ. Ը. Քղւոյ վարժարանի — Թիւ 22 եւ 23 խնդրոց լուծումներն ուղիղ են:

Սղերդ. Տ. Պ. Արապեան — Թիւ 23 խնդրոյ լուծումները ուղիղ է:

Դաւրէժ. Տ. Ն. Յակովբեանց — Նոյնպէս:

ՓՈՔՐ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍԻ

Ատանա. Տ. Կ. Գ. Մ. — Անցեալ տարւոյ Հոկ. 18 թուակիր մեր Թղթատարական տոմին պատասխանը ց'արդ ընդունած չը լինելով, կը խնդրենք որ Մասիս տարեկան բաժանորդագին պարտքերնիդ 69 զշ. առ մեզ հասցնել բարեհաճիք:

Ափ. Տրիպոլիս. Տ. Գ. Ո. — Մասիսի բաժանորդագրութեան պայմանագրով լրանալով ներկայ ամսոյս վերջ, կը խնդրենք որ փութացնէք մէկ տարեկան բաժանորդագին 69 զշի առ մեզ յուղարկումը:

Աֆիօն. Գարա — Հիսար — Տ. Ս. Գ. — Անցեալ տարւոյ Հոկ. 24 թուակիր մեր Թղթ. տոմը կը հաստատենք, որուն ցարդ պատասխանած չէք, կրկին խնդրելով որ տարեկան բաժանորդագին պարտքերնիդ առ մեզ հասցնել բարեհաճիք:

Մալկարա. Տ. Գ. Շ. — Նոյնպէս:

Եօզղատ. Տ. Ա. Մ. — Ձեր Մասիսի բաժանորդագրութեան պայմանագրով լրացած ըլլալով անցեալ փետր. 1ին, կը խնդրենք որ բարեհաճիք անյապաղ նորոգել զայն եթէ չէք ուղղեր որ դադրի թերթեութեւն առաքումը:

Քալէճիք. Տ. Գ. Ս. — Նոյնպէս:

Եօզղատ. Տ. Զ. Ք. — Նոյնպէս:

Պասրա. Տ. Խ. Գ. — Ձեր բաժանորդագրութեան պայմանագրով մարտ 1է ի վեր լրացած ըլլալով կը խնդրենք որ անյապաղ վերանորոգել բարեհաճիք եթէ թերթեութեւն շարունակութիւնը կ'ուզէք:

Պաֆլագ. Թորգոմեան Ընկերութիւն — Նոյնպէս

Տիւրքի. Տ. Պ. Բ. — Նոյնպէս:

Վախչէն գիւղ. Տ. Գ. Ա. — Նոյն և ձեզ համար:

Ակն. Տ. Գ. Զ. — Նոյնպէս:

Ուսթըր, Մաս. Տ. Գ. Գ. Բ. — Նամակնիդ ներփակեալ երեք տօլառով ընդունեցանք. երեք տօլառ, 60 զշ միայն կ'արժեն ի Պոլիս, կը պարտիք դեռ ուրեմն ինն դահեկան: — Ոմանց նկատմամբ ձեր յայտնած կարծիքներէն օգուտ կը քաղենք. ձեր յօդուածը չը հրատարակուեցաւ ո՛չ կրօնական այլ գրական նշկատումներով:

Տիգրանակերտ. Տ. Վ. Կ. Ք. — Մարտ 26ի նամակնիդ ընդունեցանք, Պ...եան էֆէնտիէ ոչինչ ըստացած ենք, հաճեցէք գրել իրեն:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ

9 Մայիս 1886

Տեղական գործոց մէջ, վերջին օրերու իբր կարեւորագոյն դէպքը կը համարուի Մէրսին-Թարսուս-Ատանայի երկաթուղւոյն բացումը։ Այդ դժի երկայնութիւնն է 67 քիլոմետր, որոյ 54 քիլոմետրն աւարտած է Մէրսինէն սկսեալ եւ 13 քիլոմետր կը մընայ Ատանա հասնելու համար։ Այս երկաթուղին շինուած է ձեռամբ անգլ. ընկերութեան մը որոյ ներկայացուցիչք են՝ Պ. Պ. Գոլինսըն, Բոս Թէյլըր եւ Սըր Թ. Թանկըտ։ Աւարտած մասին հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ քանի մը շաբաթ առաջ ի ներկայութեան Ատանայի կուսակալ Բայիֆ փաշայի՝ նախկին նախարար Հանրոգուտ շինութեանց, որ այս առթիւ բանախօսութիւն մ'արտասանելով փափագ յայտնեց, ի մէջ այլոց, որ ձեռնարկուք երկարեն յիշեալ գիծը մինչեւ Տաւրոսի լեռներն։ Այս ձեռնարկութիւն, որ մեծապէս կը նպաստէ երկրին վաճառականութեան եւ արուեստից զարգացման, մասնաւոր շահեկանութիւն մ'ունի։ Հայոց համար, որ բազմամարդ են այն կողմեր եւ փափագելի է որ Բայիֆ փաշայի իղձն իրագործուած տեսնելու նախաքայլ մը լինի նորահաստատ երկաթուղին։ Առաջին կառախումբն 300 ի մօտ հրաւիրեալներ փոխադրեց ի Մէրսին ուր փառաւոր սեղան տրուեցաւ, և երեկոյին վերադարձուց զանոնք ի Թարսուս եւ յԱտանա։

Ներքին լրոց մէջ, յիշենք համառօտիւ ինչ ինչ խնդիրներ եւ տնօրինութիւններ որք ուշադրութիւն գրաւեցին շաբաթու մէջ։ Դատական քննիչներու պաշտօնը ջնջուեցաւ եւ Նլմտական քննիչներու թիւը 16 էն 8 ի իջուցուեցաւ առ ի խնայողութիւն։

Սթամպուլ լրագիրը միամսեայ դադարման դատապարտուեցաւ Թուրքիոյ բարեկամ տէրութեան մը նկատմամբ անպատշաճ յօդուած մը հրատարակած լինելուն պատճառաւ։

Կայս. կառավարութեան եւ Օսմ. Պան-

քային միջեւ առկա հաշուց խնդիրը չկարգադրուեցաւ տակաւին։ Պանքան կառավարութեան իւր ունեցած 7 $\frac{1}{2}$ միլիոն ոսկւոյ պահանջքին 3 միլիոնէն հրաժարելով, մնացեալ գումարին կանոնաւոր վճարման համար կարգադրութիւն մ'ընել կ'ուզէր։ Բ. Դրան առարկութեանց վրայ, 100,000 ոսկւոյ գեղջ մ'եւս ըրաւ, սակայն կ'երեւի թէ այդու իսկ կարելի չէ եղած համաձայնութեան մը գալ, վասն զի վէհ. Սուլթանն հրամայած է իւր նախարարաց վերստին ըզբաղիլ այս խնդրոյն քննութեամբ։ Բանակցութեան առարկայ է նաեւ փոխառութիւն մը զոր կառավարութիւնը կ'ուզէ կնքել Պանքային հետ, հաշուց կարգադրութեան առթիւ։

Պուլկարական գործերն այնքան նպաստաւոր երեւոյթ մը չեն ընծայեր իշխանին տեսակէտով։ Սոֆիայի Երեսօք. Ժողովոյ գումարման համար Արեւ. Րումէլիի գաւառէն ընտրեալ 91 երեսփոխանաց 50 է աւելին կը պատկանին ընդդիմադիր կուսակցութեան որ Ռուսիոյ կողմն յարեալ է. այդ երեսփոխանք մինչեւ իսկ պայմաններ կը դնեն, որոց գործադրութիւնն եթէ չերաշխաւորեն Աղեքսանդր իշխանն ու իւր նախարարապետն, իրենք յանձն չեն առնուր երթալ բազմիւ Սօվրանիէին մէջ։ Այս պարագայը ցոյց կուտան, թէ ընդդիմադիր կուսակցութիւնը ժողովրդեան վրայ բաւական ազդեցութիւն չահած է զոր գուցէ կրկնապատկուած տեսներ, առանց իշխանին քննական վերջին պտոյտին. սա անուրանալի է թէ իշխանին անձը սիրելի է գըրեթէ անխոր Պուլկարաց եւ ընդդիմութիւնը ծագած են քաղաքական ուղղութեանց և մանաւանդ Պ. Քարապէշեֆի դէմ։ Անգամ մը որ Երեսօք. Ժողովն գումարի եւ տայ իւր որոշումներ, իշխանը կրնայ այլ եւս անդորր մտօք չբաղիլ ինքնօրէն գաւառին ներքին կազմակերպութեան գործերով։

Յոյներն եւս, ինչպէս կը յիշուի, իրենց Խորհրդարանի վիճաբանութեանց կ'սպասեն վճռելու համար պատերազմ կամ խաղաղութիւն։ Յունաստանի ծովեզրերը պաշարեալ են միշտ, և պէտք է խոստովանիլ թէ, բաւական խստութեամբ. հելլէն նաւուց անցուղարձն արգիլուած է և օտար նաւերն եւս

խուզարկութեան կենթարկին : Աթէնքի Խորհրդարանը բացուեցաւ այս չորեքշաբթի օր եւ այս պահուս խռովայոյզ վիճաբանութիւնը տեղի կ'ունենան անդ Պ. Պ. Տէրեանիս եւ Թրիքուրիսի կուսակցութեանց միջեւ . ընդհանրապէս սա կարծիքը կը տրիէ թէ Խորհրդարանը գէշընկեցութիւն պիտի որոշէ , բողոքելով հանդերձ մեծ Տէրութեանց ճշդողական միջոցներուն դէմ : Կանխահաս է աւելի մանրամասնութեանց մէջ մտնել , առանց Խորհրդարանի քուէարկութեան սպասելու (*) :

* * *

Ազգային լրոց մէջ գոհութեամբ կը հրատարակենք , թէ Ամեն . Ս . Պատրիարք Հօր Թագրիւրին վրայ , Վեհ . Սուրբանը բարեհաճեցաւ երրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհել Եգիպտոսի Հայոց առաջնորդ Գեր . Իզմիրլեան Մատթէոս Եպիսկոպոսին :

Ամենայն Հայոց Վեհ . Հայրապետն Օրհնութեան Կոնդակ յղեց Սովետոց Կեդր . Յանձնաժողովոյ պատ . Անդամոց , օրհնելով եւ գովելով նոցա անձնուէր եւ բազմաբղիւն աշխատութիւններն աղետալի արկածին ժամանակ :

Գաւառացի ազգայնոց համար , յիշատակութեան արժանի է Օրմանեան Գեր . Մաղաքիա Մ . Վարդապետին յանձնուած պաշտօն մը : Կարնոյ Գեր . Առաջնորդն որ այս օրերս Էջմիածին կ'երթայ Եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու , ի վերադարձին Աղթամարայ վանքը պիտի երթայ , ծանուցեալ գողութեան գէպքին տօթիւ Քննչի պաշտօնով եւ ապա պիտի անցնի Վան ուր ժամանակ մը պիտի կենայ իբրեւ Այցելու Հովիւ , ծագած տեղային ծանօթ խնդրոց պատճառաւ :

Ազգային Կեդր . Վարչութիւնն , ինչ ինչ նկատումներով , առ ժամանակեայ կերպիւ եւ բացառաբար Տիգրանակերտի նորընտիր առաջնորդ Գերձակեան Գեր . Սրիստակէն Եպիսկոպոսին յանձնած է նաեւ Մշոյ Ս . Կարապետի Մենաստանի վանահայրութիւնն :

Ըստ առաջարկութեան Մշոյ Գեր . Առաջնորդին , Ազգային Պատրիարքարանը

(*) Վերջին պահուսն առնուած հեռագիր մը կը յայտնէ թէ Խորհրդարանին մեծամասնութեան տրամադրութեանց համաձայն , Եօրկիոս Թագաւորն իւր քով կոչեր է զՊ . Թրիքուրիս որ յանձն առեր է կազմել նոր նախարարութիւն մը :

միջոցներ ձեռք առած է իրենց տեղը վերադարձնել Մշոյ եւ թէմօրէից բնիկ քահանայներն որք մայրաքաղաքս պանդըխտած են :

Ազգ . Ժողովն նիստ ընելով այսօր ի Մայր Եկեղեցի , յատկապէս շնորհակալութեան քուէտուաւ առ Վսեմ . Սպարթաքեան էֆէնտի Իզմիրի Մետրոպեան վարժարանին կառուցման համար , եւ ապա ձեռնարկելով Կաթողիկ . Յանձնաժողովոյ կազմութեան ամբողջացուց անոր եօթ անդամոց բնադրութիւնն : Յաջորդ նիստը երկու շաբաթէն :

Տ . Ա .

ԱԶԳ . ԿԵԴՐ . ՎԱՐՉԱՐԱՆ

Ազգ . Կեդր . Վարժարանի խնամակալութիւնս պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ Կեդր . Վարժարանի բացման պատրաստութեանց ձեռնարկուած ըլլալով՝ աշակերտիլ փափաքողք կը հրաւիրուին ամսոյս 15էն սկսեալ երկուշաբթի , չորեքշաբթի եւ շաբաթ օրերը , առաւօտունէ մինչեւ կէս օր ներկայանալ Կալաթիոյ Յանձնաժողովոյ Խորհրդարանը , խնամակալութեան կողմէ կարգեալ պաշտօնէին քով անունին արձանագրելու եւ մոտից քննութեան եւ այլ գործողութեանց վրայ պէտք եղած տեղեկութիւններն ստանալու համար :

Հեռու գտնուող ազգայինք կրնան նամակաւ անուանց արձանագրութիւնն խնդրել , եւ ստանալ վարժարանին տը պաղրեալ յայտագիրն , ուր պիտի գրուեն ներքին կանոնադրի եւ այլ գործողութեանց վերաբերեալ ամեն տեղեկութիւնք :

Խնամակալութիւնս երկրորդ ազգով մը պիտի ծանուցանէ ներկայացեալ եւ արձանագրեալ աշակերտելոց քննութեան թուականը :

7 մայիս 1886

Խնամակալութիւն

ԿԵԴՐ . ՎԱՐՉԱՐԱՆԻ

Յ . Գ . Խնամակալութեան հասցէն նամակ եւ որ եւ գրութիւն պէտք է ուղղել առ

Ատենապետ Ազգ . Կեդր . Վարժարանի Խնամակալութեան , Ս . Լուսաւորիչ Եկեղեցի , ԿԱԼԱԹՍ

Արտօնատէր Կ . Ս . ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԷ ԼՐԱԳՐՈՅ